



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANGOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

Արժանաշնորհ  
Տ. Տէորգ Քհնյ. Առաքելեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սկեղեցւոյ  
Նախագահ Ֆիական Խորհուրդի  
Գինկ համթըն.

Սրբելի Տէր Տէորգ,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրճեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Շուրջ քառասունըփինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ եորք քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրճեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրճեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- |                           |                     |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան     | Ատենապետ            |
| Տիար Սուրէն ֆէսմեան       | Գանձապահ            |
| Տիար Եղուարդ Պաշեան       | Բ. Գանձապահ         |
| Տ. Գառնիկ Քհնյ. Հալլամեան | Քարտուղար           |
| Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան  | Բ. Քարտուղար        |
| Տիար Իիչըրտ Գ. Կրէկըրի    | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրճեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրճեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրքճեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները հաճեցէք մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ հաճեցէք գտնել <sup>20</sup> անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ծանչցուած Հայկ Գավուրքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ